



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





BB 2001

2010

AMERICAN LIBRARY

*R.*

Ա Ռ

ՎՍԵՄԱՇՈՒՔ ՏԷՐ

ԳՐԻԳՈՐ ԷԾ. ՇԱՊԱՆԵԱՆ

Ի ՆՇԱՆ ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆԱՅ

ՆՈՒԻՐԷ

ՀԵՂԻՆՍԿԸ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆՃԵԱՆ

ԱՇԱԿԵՐՏ ՄԻԹԱՐԵԱՆՅ

ՎԵՆԵՏԿՈՅ



B.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶՐՈՒՆՔ

ԻՐԱԻԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԵԱՆ




ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆՃԵԱՆ

ԱՐԺԱՆԱՑԱԾ ԻՐԱԻԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ  
ՎԿԱՅԱԿԱՆԻ ՎԵՆԵՏԿՈՅ ՄՈՒՐԱՏ – ՌՓԱՅԷԼԵԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆԷՆ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍՍ ՂԱԶԱՐՈՒ

1902

7422

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ

ԳՐԱԿԱՆ ԻՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍԻՍԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ

ՄԱՍԻՍԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ

ՄԱՍԻՍԻ ԿՈՄՍՏԱՅԻՆ

6501-57

ՄԱՍԻՍ ԵՐԿՐԻԴ

ԳՐԱԿԱՆ ԻՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԸՆԹԱՅԻ



### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն (\*)

Իրաւագէտ չ'եմ եւ ոչ ալ վարդապետ մը իրաւագիտութեան, այլ պարզ amateur մը այդ գիտութեան որոյ ընդհանուր սկզբունքներուն ծանօթանալս այնչափ նպաստած է մտաւորական զարգացմանս :

Փափաքելով իրաւագիտութեան համար ունեցած սէրէս բաժին մըն ալ հանել Ազգիս եւ նա մանաւանդ տեսնելով մեր մէջ գրեթէ կատարեալ բացակայութիւն մը ներկայ գրուածիս տեսակէն աշխատութիւններու, համարձակութիւն առի գրելու ներկայ ընթացքը հետեւելով բազմամուտ դասատուիս Պր. Մարգարիի դասերուն :

Անշուշտ լուրջ մտքի գործ չ'է կարծելն որ աշխատասիրութիւնս կատարեալ գործ մըն ըլլայ. սակայն եմէ ոչ-կատարեալ գոնէ սա առաւելութիւնն ունի՝ որ կրնայ իբր ուրուագիծ ծառայել ապագային ամեն անոնց՝ որք ձեռնհասութիւն ունենալով իրաւագիտական ուսման մէջ՝ կամենան աւելի կատարեալ երկասիրութիւն մըն ընծայել Ազգին :

*Յարութիւն Ունեճեան*

*Նախկին շրջանաւարտ Վենետիոյ*

*Մուրատ - Ռափայէլեան*

*Վարժարանին*

*Կոստանդնուպոլիս,*

*8/20 Մարտ 1899*

(\*) Ա. Մասին յառաջաբանն է զոր հոս եւս կ'արտատըպենք :



# ԴՐԱԿԱՆ ԻՐԱԽԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Խ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Գ

Հատուած Ա. — Օրէնքը

Սահման Դրական Իրաւագիտութեան . — Դրական Իրաւագիտութիւնը մարդկային օրէնագրին կամ Ժողովրդ-դեան մը լռելիէայն հաճութենէն յառաջ եկած կանոն-ներուն ամբողջութիւնն է : Դրական կրօնն՝ որովհետեւ մէն մի ժողովուրդ զայն իրեն համար հաստատած, եւ իրեն համար գրած է : Մինչդեռ Բնական Իրաւա-դիտութեան պատուէրները մաքուր միայն իմացուելով բնաւ չ'են յայտնուիր նիւթական նշաններով, Գրական Իրաւագիտութիւնը ինքզինքը կը յայտնէ զգալի նշան-ներով, արտաքին յիշատակարաններով աշխինքն օրէնք-ներով :

Եթէ արդարութեան բաղարձակ զազափարնները տի-րէին միայն, այն ատեն բոլոր ազգերը մի միայն մէկ և մեծ օրէնքի մը պիտի հնազանդէին՝ այսինքն Բնա-կան կամ թէ Աստուածային օրէնքին : Բայց այդ գա-ղափարները հազարամէկ պէտպէս ձեւեր կը զգենուն, ըստ գանազան ժողովրդոց նախապաշարունակներուն, բար-քերուն, կրքերուն և կլիմաներուն. ուրեմն ասկէ պարտի հետեւի՝ թէ որքան ժողովուրդ կայ, այնքան ալ մաս-նաւոր օրէնքներ կան, օրէնքներ՝ որք կը մօտենան ա-սուել կամ նուազ տիեզերական բնական արդարու-թեան (équité) : Այս մէն մի ազգի յատուկ օրէնքնե-րուն ամբողջութիւնն է, որ կը կազմէ մէն մի ժողովրդ-



դեան Գրական իրաւունքը: Այս օրէնքներուն հաստատմանը համար՝ հարկաւոր հեղինակութիւնը ուրիշ չի կրնար պատկանիլ՝ եթէ ոչ օրինաւորապէս կազմուած մարդկային իշխանութիւններուն: Այս օրէնքները կը կոչուին նաև կառածիւն օրովհետև կախումն ունին մի միայն մարդկան կամքէն:

Սահման Օրէնքիւն. — Ամենէն աւելի ընդհանուր տեսակէտով, ամենէն աւելի ընդարձակ իմաստով, օրէնքները՝ ըստ Մօնթէսքիէօյի՝ « իրերու բնութենէն անկողմ անհրաժեշտ յարաբերութիւններ են »: Ապաքէն, իրերը իրենց մէջ ակնդատելու յարաբերութիւններ ունին՝ որոց անխուսափելի կերպով ենթարկուած են, քանի որ չեն կրնար ոչ մերկանալ, ոչ փոփոխել իրենց բնութիւնը: Նիւթը հարցաքննելով՝ մեծն Նեւտոն հասկցաւ որ մարմինները զիրար կը քաշեն. և այս զիւտը իրեն պարզեց տիեզերքին շինուածքը: Ընդ մէջ զանազան մարմիններուն՝ որք կը շարժին միջոցին մէջ սքանչելի կանոնաւորութեամբ մը, յարաբերութիւններ կան՝ որք կ'աժանցին իրենց զանգուածէն եւ կ'որոշեն իրենց փոփոխակի գործողութիւնը: Այս անհրաժեշտ յարաբերութիւնները՝ որովհետև կ'աժանցին օտեղծագործուած իրերու բնութենէն՝ անփոփոխելի օրէնքներ են: Բայց եթէ կան անհրաժեշտ յարաբերութիւններ ոչ-շնչաւորեալ իրերու միջև, պէտք է որ գտնուին նաև անհրաժեշտ յարաբերութիւններ շնչաւորեալ էակներու միջև: Սոսկ իրենց գոյութեանը բերմամբ, այս էակները իրենց և արտաքին առարկաներու միջև ունին յարաբերութիւններ՝ որք միանգամայն իրենց գոյութեանը կանոններն են: Բայց այն ֆիզիքական օրէնքները որք կը կառավարեն զմարդ, յարաբերութիւններ են որք կ'աժանցին թէ իւր և թէ իրերու բնութենէն. այս օրէնքները այնքան անհրաժեշտ են՝ որ եթէ բնաբարութիւն՝ բնութեան գործը կը կործանի: Մարդս սակայն միայն ֆիզիքական էակ մը չէ. նա օժտուած է ազգաւ և մտացի բնութեամբ մը, որ ունի իւր անձին զիտակցութիւնը, որ կը ներգործէ գիտնալով և կամաւորապէս՝ արտաքին աշխարհիս դէմ, և որ ընդունակ է իմանալու ճշմարիտը, արդարը, իրաւունքը և պարտքը: Բարոյա-

կան այս բնութենէն, որպէս և ֆիզիքական բնութենէն, կ'աժանցին նաև անհրաժեշտ յարաբերութիւններ որք օրէնքներ են մարդկային էակին համար. մի միայն ֆիզիքական պէտքն է ճակատագրային և անդիմադրելի, մինչդեռ բարոյապէս անհրաժեշտ յարաբերութիւնները կրնան կամաւորապէս բռնաբարուիլ. բայց, բնաբարութեանց մէջտեղ իսկ, կը մնան դարձեալ օրինաւոր միակ յարաբերութիւնները: Մեկնելով այս բացարձակ տեսակէտէն, Մօնթէսքիէօ զրական օրէնքները յետագայ կերպով կը նկարագրէ. « Օրէնքը, ընդհանրապէս, մարդկային բանն է զի սա է որ կը կառավարէ երկրիս բոլոր ժողովուրդները. և մէն մի ազգին քաղաքական և քաղաքային օրէնքները պարտին ուրիշ բան չ'ըլլալ եթէ ոչ մասնաւոր պարագաներ որոնց համար ի գործ կը դուրի մարդկային այդ բանը: Ատոնք այնքան սեպհական պէտք է ըլլան այն ժողովրդեան՝ որոյ համար շինուած են՝ որ զիպուածին մէկ մեծ խաղը պէտք է համարիլ՝ երբ ազգի մը այդ օրէնքները կարենան յարմարիլ ուրիշ ազգի մը: Պէտք է որ ատոնք վերաբերին հաստատուած և կամ թէ հաստատուելի կառավարութեան մը բնութեանը և սկզբունքին... Ատոնք պարտին յարաբերիլ երկրին բնական հանգամանքներուն, սառեցուցիչ, կիզիչ կամ բարեխառն կլիմային. զեանին յատկութեանը, կացութեանը, մեծութեանը. ժողովրդոց ազրելու տեսակին, ըլլան հողագործ, որսորդ կամ խաշնարած. ատոնք պարտին վերաբերիլ բնակչաց կրօնքին, հակամիտութեանցը, հարստութեանցը, թուոյն, վաճառականութեանը, բարքերուն և կերպերուն. վերջապէս ատոնք իրարու մէջ յարաբերութիւններ ունին. ինչպէս յարաբերութիւններ ունին իրենց ծագմանը հետ. օրէնքդրին նիւթին հետ, կարգաւորութեանը հետ այն իրերուն՝ որոց վրայ հաստատուած են »:

Թէպէտև, Վոլթերէն սկսեալ, Մօնթէսքիէօյի այս տեսութիւնը նիւթ եղած ըլլայ մինչև վերջին ժամանակները բուն քննադատութիւններու, և թէ մեղադրած ըլլան այդ տեսութիւնը՝ իր մի ունայն ընդհանրութիւն « աւելի իրական բնական գիտութեանց քան



օրէնսգիտութեան մէջ», դժուար է սակայն օրէնքներու էութեանը վրայ աւելի ուղիղ գաղափարի մը հանդիպիլ: Մօնթէսքէիօյի գաղափարը, մարդկային հանձարէն եւ լած ամենէն գեղեցիկ դիտողութիւններէն մէկն է: Օրինաց ոգւոյն հեղինակը այսու հանդերձ բնաւ բնազանցական զուլս մը չ'է: Փոխանակ երթալու որոնելու իր անհրաժեշտ յարաբերութիւնները գաղափարական աշխարհին մէջ, եղելութեանց դրական ուսումնասիրութեանը մէջն է որ կը յաւակնի գտնել զայն: Նա զմարդ չի նկատեր էակ մը վերացեալ, ստեղծուած խորհողութեամբ, նա կը դիտէ զայն իրական այն վիճակին մէջ՝ զոր կը ցուցնէ պատմութիւնը: Նա կը քննէ օրէնքները իրենց կառավարութեան, բարոյից, կլիմային, կրօնքին և վաճառականութեան հետ ունեցած յարաբերութեանը մէջ: Չեոք կ'առնու եղելութիւնները, և զայնս իւր ուղածին պէս կը յարգարէ:

Իւր նպատակին տեսակէտովը նկատելով, դրական օրէնքը, մարդու գործողութիւններուն կանոնն է, հաստատուած մարդկային հեղինակութեան մը դէմ դնելու համար անհատներուն պարտականութեանցը ընելու կամ չ'ընելու ինչ ինչ գործողութիւններ՝ պատժոյ սպառնալէօք: Ատիկայ կը պահպանէ խաղաղութիւնը ընկերութեան մէջ. ատիկայ կ'արգելու, կամ թէ, առ նուազն, կը հանդարտեցնէ այն վէճերը՝ զորս կիրքերը չ'են պակսիր յարուցանելէ անգանօր: Վիճակուած ըլլալով կանոնաւորելու մարդկան գործողութիւնները, իւր էութեանէն իսկ սոխպողական է, ապա թէ ոչ կանոն մը եղած չ'ըլլար, այլ առ առաւելն խրատ մը կամ յորդոր մը:

Իւր յատկութեանը տեսակէտէն ուսումնասիրելով, հռովմէական իրաւագէտներու հետ մարթ է սահմանել դրական օրէնքը՝ հասարակաց պատուէր մը, որովհետեւ իւր բնութենէն իսկ միւլեռոյնն է՝ միւլեռոյն երկրի մը աւան անպամներուն համար, և կ'ընդգրկէ անձերու և իրերու ընդհանրութիւնը, և վճիռ կ'արձակէ անոր վրայ որ կը պատահի ամենեւն աւելի սովորաբար և ոչ թէ բացառիկ պարզ դէպքերու վրայ, և կ'ենթարկէ՝ միւլեռոյն յանցանքներու համար՝ միւլեռոյն պարտքերու, միւլեռոյն հարկերու, միւլեռոյն պատիժներու, և կուտայ իրենց

միւլեռոյն իրաւունքները: Այն օրէնքը որ կը մոռնայ այս էական սկզբունքերը, ուրիշ բան չ'ըլլար՝ եթէ ոչ առանձնաշնորհում մը, և քանի որ անհրաժեշտարար մէկու մը վնաս պատճառելով ուրիշի մը նպատակով կ'ըլլայ այդպէսով, այդ օրէնքը կը մերկանայ իւր սիրելի ըլլալու հանգամանքէն:

Վերջապէս իւր մարդկային ծագմանը տեսակէտէն նկատելով, բացարձակ միապետական դրութեամբ կառավարուած երկիրներու մէջ դրական օրէնքը սակաւ կարելի եղած է սահմանել՝ վեհապետի կառքը և սահմանադրական վարչութեամբ սփռուած ժողովրդոց մէջ ալ՝ ընդհանուր կամքին արտայայտումը:

Բնական օրինաց և դրական օրինաց մէջ եղած տարբերութիւնը. — Բազում տարբերութիւններ կան Բնական Օրէնքներուն՝ որք մարդու ընկերական բնութենէն կ'ածանցին, և Գրական Օրէնքներուն մէջ՝ որք ընկերութեան մէջ միացած մարդոց կամքին անմիջական արգասիքն են՝:

Բնական Օրէնքները յատուկ են ամեն ժամանակներու և ամեն վայրերու. կը կարգաւորեն անցեալը, ներկան և ապագան: Գրական Օրէնքները սահմանուած են ժամանակէն և վայրերէն, չեն դառնար անցելոյն. կը շատանան կառավարելով ներկան և ապագան:

Բնական Օրէնքները կը խօսին մարդու ներքինին. բանականութիւնն է որ զայնս ստիպողական կը կացուցանէ: Մինչդեռ իրենց հնազանդելու համար պէտք է որ Գրական Օրէնքները ընկերային մարմնոյն ծանուցուին:

Բնական Օրէնքները միշտ և ամենուրեք արդար են և ուղիղ: Եւ ոչ մէկ իշխանութիւն կարող է զայնս փոխել, և ոչ ալ շնջել: Գրական Օրէնքները կրնան փոխուիլ և շնջուիլ:

Երբեք կարելի չէ փախուստ սալ Բնական Օրէնքներէն: Ինչ ինչ պարագաներու մէջ կարելի է հեռանալ Գրական Օրէնքներէն:

Չանագան տեսակ Գրական օրէնքներ. — Բնական Օրէնքը միաձև է: Գրական Օրէնքներուն մէջ կան՝

1. Serrigny, Traité du Droit Public des Français.



հիմնական և երկրորդական օրենքներ : հրամայական (impérative), արգելիչ (prohibitive), քոչտուչի (permissive) օրենքներ, նորոգիչ (innovative), մեկնական (interprétative), ընդհանուր, տեղական, անձնական օրենքներ, կանխարգել (préventive) օրենքներ, և բացառչական օրենքներ :

Հիմնական օրենքն այն է՝ որ կը հաստատե պետուչքեան մը մէջ իշխանութեանց բաշխուելը : Ստիկայ կը կոչուի նաև արևատական օրենք կամ Սահմանադրութիւն : Ազգի մը կառավարութեանն ձևը՝ որոշող կանոններուն ամբողջութիւնը գոյութիւնն ունի կը ըսէ թէ՛ որպիսի՝ եղանակաւ պիտի տրուի, և որպիսի՝ պայմաններու մէջ պիտի գործածուի օրենքներ շինելու, զայնս կատարելու, եւ զայնս քաղաքացւոց միջև ծագած վէճերուն գործադրելու պաշտօնը : Սահմանադրութիւնը կը կոչուի Հիմնական Օրենք, որովհետև անոր վրայ է որ կը հանգչի ժողովրդեան մը քաղաքական կազմաւորութիւնը :

Երկրորդական օրենքները անոնք են՝ որ կը կարգաւորեն մանրամասնութիւնները, կը ճշգրեն թէ ինչպէս պիտի գործածուին հիմնական օրենքով հաստատուած իշխանութիւններուն զանազան պաշտօնները, ասոնք ի կիր կ'առնուեն այդ տիպար-օրենքով դրուած սկզբունքները : Սովորաբար սահմանադրութիւնները կը պարունակեն մի միայն ընդհանուր սկզբունքներ, յետին աստիճան ընդարձակ, որոց խմբագրութիւնը, երբեմն տարածում գոյով, գործադրութեան մէջ անթիւ գծուարութեանց տեղի կուտայ, եթէ երկրորդական կամ կազմական ևս կոչուած օրենքները չի գան զայնս շարժելու և զարգացնելու :

Հրամայական օրենքները անոնք են՝ որ կը հարկադրեն ինչ ինչ պարտականութիւններու, և կը պատուիրեն ինչ ինչ գործողութիւններ, որպէս տուրքերու վճարմանը, զինուորական ծառայութեանը վերաբերեալ օրենքները, եւ այլն :

Օրենքները Արգելիչ են՝ երբ կ'արգելուն ընելու այս ինչ կամ այն ինչ արարքը : Այսպէս՝ Օրինագրքի մը այս ինչ յօդուածն որ կը տրամադրէ թէ «այլը այս ինչ տարիքին մէջ, և կիսն ալ այս ինչ տարիքին մէջ, չ'են կարող ամուսնութիւն կնքել», ասիկայ արգելիչ

օրենք մըն է : Այսու հանգերձ պէտք է դիտել որ օրենսդիրը սովորաբար օրենքներ չի շիներ արգելելու համար այն՝ որ արդէն արգելեալ է բացայայտ բնական իրաւունքէ մը : Ահա ատոր համար է որ օրենսդրական և ոչ մի տրամադրութիւն կայ որ արգելու մարդասպանութիւնը կամ գողութիւնը : Այս գործողութեանց մասին օրենսդիրը կը շատանայ սահմանելով ատոնց հեղինակացը արուելիք պատիժը :

Կառաւոր կամ թոյլտուչի կը կոչուին այն օրենքները՝ որք անոնց հրամայելու և արգիլելու, կը շատանան մտցնել իրաւունք մը, զորս մարթ է գործածել կամ ոչ, ըստ կամս : օրինակի համար, Օրինագրքերու այն տրամադրութիւնները՝ որք կ'արտօնեն՝ որ ծնողք կամ թէ այլ սերողք կարենան իրենց զաւակացը եւ սերնդոցը մէջ բաշխել ու բաժնել իրենց ստացուածքը :

Թոյլտուչի օրենքներուն յատկանիշն է պարզ արտօնութիւն մը ստեղծել ի նպատակ անձի մը որ կատարելապէս ազատ է զայն գործածելու կամ՝ չի գործածելու : Սակայն ինչ ինչ օրենքներ թէ կառաւոր և թէ արգելիչ են միանգամայն : Այսպէս այն օրենքը՝ որ կը թոյլտարէ այս ինչ տարիքին մէջ ամուսնանալը, կտակ ընելը, պայմանագրութիւն կնքելը, միանգամայն թէ կառաւոր է թէ արգելիչ, որովհետև այս ինչ ասեն այդ արարքները ընելը արտօնելով հանգերձ կ'արգելու ատոնց կատարումը այն ժամանակէն առաջ զոր որոշած է :

Նորոգիչ օրենքները անոնք են որք նոր իրաւունք մը կը մտցնեն :

Մեկնական օրենքները են անոնք որք ուրիշ բան չեն ըներ եթէ ոչ կանխագոյն օրենքի մը իմաստը յայտնել : Օրենսդրին կողմանէ տրուած մեկնութիւնը ստիպողական է ամէն գատաւորներու համար, և տրուած օրենքէն վերջը գատուած ամեն գատերու մէջ : Մեկնական օրենքները կը յետադրեն (rétroagir) մեկնուած օրենքին օրը, սա իմաստով որ առաջին օրենքէն վերջը բայց երկրորդ օրենքէն առաջ եղած պայմանագրութիւններն և միւս իրաւաբանական եղելութիւնները պարտին այսու հանգերձ դատուած ըլլալ ըստ երկրորդ օրենքին, թէպէտև ասիկայ վերջը հրամայուած ըլլայ : Ստիկայ սա



պատճառաւ է որ օրէնսդիրը չ'ուզեր նորութիւն մտցը-  
նել, այլ կը շատանայ բացատրելով մի միայն այն  
որ էր :

Ընդհանուր օրէնքները օրէնսդրին այն արարքներն են,  
որք վիճակուած են ստիպողական ըլլալու ամեն քաղա-  
քացիներու համար, երկրին ամեն մասերուն մէջ :  
Տեղական օրէնքները մասնաւոր են երկրին այս ինչ մա-  
սին, մէկ կամ բազում գաւառներուն : Այս վերջին  
օրէնքները հազուադէպ են : Օրէնքներուն միաձևու-  
րիւնը ժ.Յ. դարուն մէջ քաղաքական հարցի մը կեր-  
պարանքը առած է : Իւր արգասիքն է դիւրացնել ար-  
գարութեան մատակարարութիւնը. նուազեցնել վէճերը  
մասնաւորաց շահուն տեսակէտին համաձայն. պետու-  
թեան մը զանազան մասերուն միացումը ամրապնդել և  
տալ ատոնց այն յարակցութիւնը, որ ցիրուցան ան-  
գամներով, կազմէ միակ ժողովուրդ մը : Ազգի մը մէջ  
որ միաձև օրէնսդրութիւն մը ունի, օրէնքները աւելի  
աղէկ ճանչցուած են, աւելի յստակ, աւելի աղէկ յար-  
գուած, ընկերային կեանքը աւելի հեշտ, ընդհանուր  
կամ հասարակաց կարծիքները աւելի աղէկ արտայայ-  
տուած են :

Անձնական օրէնքները կամ առանձնաշնորհումները են  
անոնք՝ որք հաստատուած են մի միայն կարգ մը ան-  
ձերու համար, որոց կը շնորհուի առաւելութիւն մը :  
Պէտք է զայնս կարելի եղածին շափ քիչ շատցնել, յար-  
գելու համար ամեն քաղաքացիներուն բնական հաւա-  
սարութիւնը : Այսօրէն օրէնքին յատկանիշն է ստիպողա-  
կան ըլլալ Տէրութեան ամեն անգամներուն համար, նոյն  
իսկ վեհապետին անձին համար : Սակայն կարգ մը  
բացառիկ պարագաներ կարծես հասարակաց իրաւուն-  
քէն խոտորումներ կը պահանջեն :

Կանխարգել մակդիրը կուտան այն օրէնքներուն՝ որոց-  
մով օրէնսդիրը կուգէ կանխաւ արգիլել որոշեալ ինչ  
ինչ արարքներ : Այս օրէնքները, կը մեղադրուին իրր  
հակառակ ազատութեան, նպաստաւոր ամենէն կեղե-  
քիչ միջոցներու, և տեղի տուող անհիմն յանցանքնե-  
րու : Ատոնց կարգէն է կ'ըսեն զրաքննութիւնը : Բացա-  
ռաբան օրէնքները արուած են յանկարծական վտանգ-  
ներու և արտասովոր պարագաներու համար : Օրինակի

համար ինչ ինչ պարագաներու մէջ հասարակաց ապա-  
հովութեանը համար ձեռք առնուած արտասովոր մի-  
ջոցները բացառաբան օրէնքներ են : Այսու հանդերձ  
այս կարգի օրէնքները իրաւագէտներու կողմանէ միշտ  
ստաղակալի և ընդհանրապէս անիրաւ նկատուած են :

Հ ա տ ու ա ծ Բ

Կանոնադիր իշխանութիւն . (Pouvoir réglementaire).

Կանոնադիր իշխանութիւն. — Մենք մինչև հոս մի  
միայն բռն զբաղեալ կուրած օրէնքներու վրայ խօսե-  
ցանք. բայց օրէնսդիր հեղինակութենէ մը բղխող այս  
սրամագրութիւնները՝ քաղաքացւոց համար ստիպողական  
զօրութիւն ունեցող միակ արարքները չեն կազմեր :  
Տէրութեան պետը՝ իրր աւանդապաճ գործադիր իշ-  
խանութեան՝ յետոյ, իրմէ վար, և իւր անուանը,  
զանազան գործիչներ, հրովարտակի (décret), կանոնագրի  
(règlement), վձիւի (arrêté), հրամանագրի (ordon-  
nance) տիտղոսներուն ներքև կ'արձակեն որոշումներ,  
որք բուն օրէնքներուն նման, հնազանդութիւն կը  
պատուիրեն ամենուն նկատմամբ. և այս որոշումները  
ստիպողական են միայն յետագայ երկու պայմաննե-  
րով. Ա. պէտք է որ արուած ըլլան օրէնքի հաւա-  
ճայն. Բ. պէտք է որ գանուին իրաւաստաբանացը սահ-  
մաններուն մէջ այն պաշտօնակներուն որոնցմէ կը  
րոյխին :

Հոս դիտել տանք՝ որ կանոնագրի և հրովարտակի  
մէջ եղած տարբերութիւնը սա է՝ որ առաջինը որոշում  
կուտայ՝ ընդհանուր եղանակաւ մը՝ նիւթերու վրայ, որք  
կը շահագրգռեն զաղաքացւոց ընդհանրութիւնը, և եր-  
կրորդը կը կազմէ սովորական այն որոշումները՝ որոնց-



մով կը յայտնուի զօրծագիր իշխանութեան պետին հեղինակութիւնը, նոյն իսկ մասնաւորաց շահերուն մասին:

Եւրոպիոյ սահմանադրական պետութեանց գրեթէ ամբողջութիւնը՝ թագաւորին միայն կը վերագրէ զօրծագիր իշխանութիւնը՝ որն որ կրնայ հրատարակել տալ օրէնքներ՝ հրովարտակելով այն միջոցները որք հարկաւոր են անոնց զօրծագրութեանը:

Տէրութեան պետին մասնակցութիւնը օրէնսգիր իշխանութեան զօրծածութեանը գիւրաւ կ'արգարանայ: Բռն օրէնք կաշտածք կը շատանայ սկզբունքներ գնելով. ան իւր արամագրութիւններէն զուրա կը թողու շատ մը փոփոխական մանրամասնութիւններ, որք կարելի չ'է որ հաշտուին օրէնքին հաստատունութեանը հետ: Իւրերու զօրութիւնը կը պահանջէ ուրեմն՝ որ Տէրութեան պետին թողուի օրէնքներուն զօրծագրութիւնը ժամանակներուն և պարագաներուն յարմարցնելու հոգը: Քանի որ օրէնքը վճիռներ կուտայ միայն ընդհանուր եղանակաւ, քանի որ ան չի կրնար ամեն բան նախաւ տեսել և ոչ ալ ամեն բան կանոնաւորել. պէտք է որ հրամայող օրէնսգրին և ասոր իւր բազուկը կարկառող պաշտօնեային մէջտեղը գայ մտնէ հեղինակութիւն մը, որ խօսի օրէնքին տեղը, երբ սա ամեն բան ըսած չէ, որ հրովարտակէ այն երկրորդական միջոցները զոր սա ինքնին չէ պատուիրած, որ ճշտէ իւր կամքը, երբ սա զայն յստակօրէն արտայայտած չէ: Գործագիր իշխանութեան պետը՝ այս պաշտօնը կատարելով կրնայ իրաւամբ նկատուիլ որպէս փոխանորդը օրէնսգրին:

Տէրութեան պետին մասնակցութիւնը օրէնսգիր հեղինակութեան կը կոչուի կանոնադրական իշխանութիւն: Այս իշխանութեան զօրծածութիւնը կրնայ չենթարկուիլ և ոչ մէկ մասնաւոր ձևի:

Սահմանադրական երկիրներու մէջ, ազգը ինքզինքը, փոխանորդներու միջոցաւ կառավարելուն համար, օրէնքին բաժինը կանոնագրին բաժինէն աւելի ընդարձակ է: Օրէնսգիրը շատ աւելի բաներ կը կանոնաւորէ եւ կանոնադիր իշխանութեան կը թողու միայն մանրամասնութեան այն խնդիրները որք կը պահանջեն քննութիւն մը, մասնաւոր միջոցներ, պարագաներու և պատահա-

կանութիւններու դնահատում մը: Ընդհակառակն այն ազգերուն քով՝ ուր գործագիր իշխանութեան զօրէնք է, ուր կառավարութիւնը բացարձակ է, Տէրութեան պետին օրէնսգիր հեղինակութեան մասնակցութիւնը ուժգին զարգացուած է: Կանոնագիրը և հրովարտակը կը տարածուին նիւթերու վրայ որք օրէնսգրին ձեռնհասութեան գուրս չեն, և հոս է որ տեղի կուենան կայսերական հրահանքեր:

Կանոնադիր իշխանութեանը դրոշմ սահմանը. — Որն է այն որոշ կէտը՝ ուր պարտի կենալ օրէնքին զօրծը և ուր կրնայ սկսիլ կանոնագիր իշխանութեան զօրծածութիւնը: Գծուար է լուծել այս խնդիրը: Սակայն համաձայնած են հաստատելու՝ թէ օրէնքին է որ պարտին վերաբերիլ այն ամեն մնայուն և տեւական միջոցները որք կը շահագրգռեն քաղաքացոց ընդհանրութիւնը. կանոնագրին ալ՝ այն պատահական և անցաւոր արամագրութիւնները՝ որք ընդունակ են փոփոխութիւններու, ըստ տեղւոյն: Այն նիւթերը որք անմիջական որոշում մը և արուեստագիտական ծանօթութիւններ կը պահանջեն՝ կանոնագիրերն է կ'ենթարկուին. մինչդեռ այն նիւթերը՝ որք իրենց կարեւորութեամբ՝ յամր եւ հանդիսաւոր ձեւերու շուքը կը պահանջեն, պէտք է որ օրէնսգրին կողմանէ լուծուին:

Սակայն, օրէնքը շատ անգամ՝ փոխանորդութեամբ զօրծագիր իշխանութեան կուտայ կանոնագիրերն միջոցաւ իւր ընելիք գործը աւարտելու հոգը:



Հատուած Գ

Օրենքներուն կազմուչքները .

Օրենքներուն կազմուչքները և տարրերը . — Բուն օրենք կոչուածներուն կազմութիւնը, ամեն երկրի մէջ, ամենէն բարձր ստորագելին է ընկերային իշխանութեան, որոյ կազմը կը տարրերի ժողովրդէ ժողովուրդ :

Օրենքի մը կազմուչքները լուծելով՝ երեք տարրական դործողութիւններ կը գտնենք . առաջարկուչքին, վիճարկուչքին և վաւերացում :

Առաջարկուչքին կամ նախաձեռնուչքին . — Առաջարկուչքները կամ նախաձեռնուչքները այն դործողութիւնն է՝ որով օրէնագիր իշխանութիւնը (որոյ վրայ պիտի խօսինք իր աեղը) կը խնդրուի որ դործէ : Ասի անհրաժեշտ շարժիչն է օրէնագրին կամքին վերջնական յայտնութիւնը բերելու համար . ասի օրէնքին սերմնն է : Նախաձեռնութիւնը է այնպէս վաւերացման՝ որպէս ծրագիրն է որոշման :

Վիճարկուչքին . — Վիճարկուչքին նիւթ է գնահատել արժանիքը եղած առաջարկութեան՝ նկատելով սա իւր ամբողջութեանը և իւր զանազան մասերուն մէջ : Բարեփոխումներ (amendements) կը կոչեն միջանկեալ առաջարկութիւնները որք կուզան փոխելու սկզբնական առաջարկութիւնը :

Վաւերացում . — Վաւերացումը՝ վիճարկուչքէն ելած՝ վիճակին մէջ օրէնքի ծրագրին տրուած հաւանութիւնն է (approbation) : Ասիկայ է որ կուտայ օրէնքին իւր ստիպողական յատկանիշը : Արդ օրէնքի ծրագիր մը կը բաղկանայ շատ մը յողուածներէ, առնց իւրաքանչիւրը կրնայ մի մասնակի և առժամանակեայ վաւերացման մը առարկայ ըլլալ . բայց այս անկատար հաւանութիւնները չեն կրնար զանց առնուլ վերջին հաւանութիւնը որ կ'ընդգրկէ ամբողջութիւնը :

Հրատարակուչքին (Promulgation) . — Վաւերացմամբ է որ օրէնքը կը կենայ : Բայց անհատներու գործողութիւն ըլլալու համար՝ պէտք է նաև որ օրէնագրին կամքը զիտցուի : Լրացուցիչ միջոց մը հարկաւոր է ուրեմն, և ասիկայ է հրատարակուչքները, այսինքն թէ ձեռնհաս իշխանութեան կողմանէ և պահանջուած գործողութիւններով օրէնքին հրատարակութիւնը : Հրատարակուչքները մարթ է նաև սահմանել, այն դործողութիւնը՝ որով Տէրութեան պէտք կը հաստատուէ հանդէպ ընկերային մարմնոյն օրէնքին գոյութիւնը եւ հասարակաց իշխանութեան պաշտօնեաներուն կը հրամայէ չօկել անոր գործադրութեանը :

Գաղղիոյ, Անգլիոյ, Պիեմոնտի և ուրիշ երկիրներու մէջ որուն կը վերաբերի օրենքներուն նախաձեռնուչքները . — Տրանսայի մէջ այժմ օրէնքներու նախաձեռնութիւնը կը վերաբերի թէ կառավարութեան, թէ ծերակոյտին և թէ Երեսփոխանաց ժողովին :

Անգլիոյ մէջ թագակալը մի միայն հասարակաց bill՝ մը հրովարտակելու իրաւունքը ունի, որ է ընդհանուր ներման պիղը : Միւս բոլոր պիղերը պէտք է որ ներկայացուին Երեսփոխանաց կամ թէ Լորտերու ժողովներուն անդամներէն մէկուն կողմանէ : Այսու հանդերձ այն պիղերը որ վերաբերութիւն ունին հասարակաց մեծ շահու մը հետ, ընդհանրապէս կ'առաջարկուին՝ յանուն կառավարութեան զանազան վարչութեանց պետերուն, Ելեմտական նախարարին՝ եթէ խնդիրը ելեմտական է, և զաղթականութեանց նախարարին կողմանէ՝ եթէ խնդիրը Գաղթականութեանց վերաբերեալ է : Լորտերու ժողովին մէջ, անդամները մի միայն կարծիք կը յայտնեն որ զիտարութիւն ունին ներկայացնելու պիղ մը, բայց Երեսփոխանաց ժողովին անդամները պարտին կանխաւ առ այդ արտօնուած ըլլալ :

1. Անգլիոյ մէջ օրինակով, օրենքին bill կըսեն :  
2. House of Commons կըսեն Երեսփոխանաց ժողովին և անգլիական House of Lordsը Երեսփոխանաց միւս սահմանադրական տերութեանց ծերակոյտին պէս բան մըն է :  
3. Ար Անգլիոյ մէջ The Chancellor of the Exchequer կը կոչուի :



ժողովին կողմանէ : Ուրեմն Անգղիոյ մէջ օրէնքներուն նախաձեռնութիւնը կը վերաբերի յիշեալ ժողովներուն անդամոցը միայն :

Իտալիոյ մէջ նախաձեռնութիւնը կը վերաբերի թագաւորին և Երեսփոխանաց և ձերակոյտի ժողովներուն :

Ըստ Պէլճիքական Սահմանագրութեան մասնաւոր սըրամադրութիւններու՝ օրէնսդրական իշխանութիւնը կը գործէ հաւաքաբար, թագաւորով, Երեսփոխանաց ժողովով և ձերակոյտով : Եւ սա յաւելուածական արամադրութեամբ՝ որ նախաձեռնութիւնը կը վերաբերի օրէնսդիր իշխանութեան երեք ճիւղերուն իւրաքանչիւրին :

Հոլանտական Սահմանագրութիւնը նախաձեռնութիւնը կուտայ թագաւորին և ընդհանուր ժողովին :

Սահմանագրական վերոյիշեալ միւլնոյն արամադրութիւնները կը գործածուին նաև Սպանիոյ, Փորթուգալի, և ուրիշ երկիրներու մէջ :

Նախաձեռնութիւն ունեցող իշխանութիւններու կողմէն առաջարկուած, օրէնսդիր ատեաններու կողմէն քուէարկուած օրէնքի ծրագիրները օրէնք կ'ըլլան, ինչպէս որ խօսեցանք, մի միայն վաւերացնամբ որն որ կը վերաբերի միշտ ու միշտ Տէրութեան պետին :

Տէրութեան պետին վաւերացումը հաւանութիւնն է զոր կուտայ օրէնսդիր ատեաններու կողմանէ քուէարկուած օրէնքի ծրագրին : Այս հաւանութիւնը կ'ամբողջացնէ օրէնսդրին գործին կատարելութեանը հարկաւոր եղած գործողութիւններուն ամբողջութիւնը . ան իրականապէս օրէնքին կուտայ իւր զօրութիւնը, քանզի այդ վայրկեանէն է որ կը սկսի օրէնքը գոյութիւն ունենալ : Օրէնքին կատարելութեանը անհրաժեշտ եղող այս գործողութիւնը կը կատարուի օրէնսդրաց խորհրդածութիւններէն ելած օրէնքի ծրագրին Տէրութեան պետին ստորագրութիւնը գրուելովը :

Հրատարակութեան արդիւնքը . — Եթէ վաւերացումը պէտք է օրէնքին կատարելութեանը համար, հրատարակութիւնը օդտակար է միայն երբ օրէնքը աւարտած է . ասոր առարկան է օրէնքին գործադրութեան գրուիլը . հետևաբար ասիկայ կը մտնէ բացարձակապէս գործադիր իշխանութեանը իրաւասութիւններուն մէջ : Ուրեմն

իրբ պէտ այս իշխանութեան է որ Տէրութեան պետը պաշտօն ունի օրէնքները հրատարակելու : Հրատարակութիւնը, ըստ Փորթալիսի, « օրէնքին հանդիսաւոր սպագրութիւնն է, անոր գոյութիւնը հասկցնելու և ժողովուրդը անոր գործադրութեանը կապելու միջոցն է » :

Հրատարակութեանէն առաջ օրէնքը կայ, բայց գործադրելի կ'ըլլայ, բունդասիչ զօրութիւն կը ստանայ մի միայն այդ ձեակերպութեանը և դատական ու վարչական պաշտօնէից ուղղեալ գործադրութեան պատուիրանագրին զօրութեամբը :

Հրատարակութեան (Publication). — Օրէնքը հրատարակուածին պէս՝ քաղաքացիներուն համար կը սկսի անոր ծանօթանալու և անոր հարկադրած պարտքերուն տեղեկանալու պարտականութիւնը՝ կամ այս պարտուցը ամբողջութեանը առանց զանազանութեան, և կամ թէ առոնցմէ մի քանիին միայն՝ ըստ իրենց պաշտօնին կամ իրենց մասնաւոր դիրքին : Արով չի բաւեր որ օրէնքը միայն հրատարակուի, պէտք է նաև որ հրատարակութիւնը օրինականապէս ճանչցուի : Այսպէս, այն օրէնքը որ վաւերացուած է և ոչ հրատարակուած, գոյութիւն ունի, անշուշտ, բայց տակաւին գործադրելի չի կրնար ըլլալ : Երբ հրատարակուած է՝ այն առոն գործադրելի է, անշուշտ, բայց տակաւին առիպողական չի կրնար ըլլալ : Առիպողական կ'ըլլայ միայն իւր հրատարակութեանը հաստատակաց ծանուցուելու վայրկեանէն սկսեալ :

Օրէնքներուն ուժը . — Օրէնքներուն խմբագրութեանը մէջ փնտռելիք ամենէն աւելի մեծ արժանիքն է համաօտութիւնը, պարզութիւնը և յստակութիւնը : Օրէնսդիրը պարտի խնամօք զանց առնուլ ու է մութ բացատրութիւն : Իւր գործածած պարբերութիւնները պէտք է որ կարճ ըլլան և ոչ երկղիմի : « Այս ինչ բառէն կախումն ունի այս ինչ օրէնքը, ըսած է Պէնթհայմ : Բառերէն զատ ուրիշ բանով կարելի է օրէնք չի նել, Կեանք, ազատ գործել, սեփականութիւն, պատիւ, ինչ որ ունինք թանկագին, ամենն ալ կախումն ունին բառերու ընտրութեանէն » :



Հ ա տ ու լ ա ճ Դ

Օրէնքներուն մեկնոչքիւնը .

Չանագան տեսակ մեկնոչքիւն օրէնքիւն . — Այն ինչ օրէնագիրը գրած է բնագիրը օրէնագրական գործին պահանջուած սեղմ յստակութեամբը, գիտութեան դերը կը սկսի : Պէտք է աղէկ մը ըմբռնել տառին մէջ պարունակուած իմաստը, զայն պարզել, մեկնել և գործադրել :

Սովորաբար մեկնութեան երեք տեսակ ազբիւր կ'օրոշեն՝ վարդապետոչքեան ձամբով մեկնոչքիւն (Interpretation par voie de doctrine), դատաչքրական մեկնոչքիւն (Interpretation judiciaire) և հեղինակոչքեան ձամբով մեկնոչքիւն (Interpretation par voie d'autorité) :

Վարդապետոչքեան ձամբով մեկնոչքիւն . — Վարդապետոչքեան ձամբով մեկնութիւնը այն մեկնութիւնն է՝ զոր կուտան մասնաւորք թափանցած ըլլան կամ ոչ օրէնքներուն ծանօթութեանը : Օրէնքներուն բացատրութիւնը, կըսեն, միւս ամեն բացատրութեան պէս, ինչ որ ըլլայ, ներքի է ամեն քաղաքացիներուն, և եթէ գրեթէ միշտ ասի կը բղխի իրուագէտներէ, պատճառը այն է՝ որ այս վերջիններուն մասնաւոր ուսումնասիրութիւնները զիրենք կարող կը կացուցանեն տալու դժուարութիւն յարուցանող բնագիրներուն աւելի ողջ մեկնութիւն մը :

Դատաչքրական մեկնոչքիւն . — Դատաչքրական մեկնոչքիւնը կը կայանայ դատարանաց կողմանէ գործնականի մէջ չի ներկայացող դանազան գէպքերուն օրէնքներու արամագրութիւնները գործագրուելուն մէջ :

Հեղինակոչքեան ձամբով մեկնութիւն . — Հեղինակութեան ձամբով մեկնութիւնը այն է՝ զոր կուտայ օրէնագիրը : Սակայ կրնայ կամ հարկադրելի ընել նոյն ինքն իրեն տալիք մեկնութիւնը, և կամ թէ դատարանի մը,

կամ թէ հեղինակի մը կողմանէ, և կամ թէ ուրիշ ո և է աղբիւրէ մը առաջուց տրուած այս ինչ մեկնութեան ընդունելութիւնը պատուիրել : Կրնայ նաև հրամայել ի յառաջագոնէ, և մի անգամ ընդ միշտ, առաջուց ցուցուած աղբիւրէ մը բղխած մեկնութիւններուն ընդունելութիւնը . կամ թէ — բայց բան մը որ մեկնութեան պարագայ մը չի կազմեր — ջնջել մութ օրէնքը և անոր տեղը դնել նոր օրէնք մը : Ար ձևի տակ ալ որ օրէնագիրը տայ ինքն իսկ իւր մեկնութիւնը, քանի որ օրէնագիր իշխանութիւնն է միակ կարող ըստեղծելու ամենուն համար ստիպողական կանոններ, իւր մեկնութիւնը առաջ պիտի բերէ ընդհանուր պարտականութիւն :

Երբեմն տեսուած է որ օրէնագիրը օրէնքի գորութիւն տուած է մի քանի իրաւագէտներու գրքերուն, հրամայելով դատաւորներուն որ գործնականին մէջ հետեւին անոնց լուծումներուն : Այս մասին առաջին օրինակը տուած է Թէոդոս Կայսրը, միջին դարուն մէջ : Այս իշխանը Վիպոչքիւններու Օրէնք (Citations) անուանը տակ՝ ծանօթ արամագրութեամբ մը նուիրագործեց հինգ իրաւագէտներու գրուածքը՝ որք են Պապինիանոս, Պաւլոս, Աւրիլիանոս, Կայիոս և Մօսէսութիւնս : Ազգեց նաև որ կասկածի մը կամ վարանման մը պահուն Պապինիանոսի կարծիքը գերակշիռ ըլլայ : Այս օրինակը կրկնուեցաւ նոր ժամանակներու մէջ . այսպէս Սպանիոյ մէջ Ֆէրաինանտի և Իդապելլայի օրովը, որք օրէնքի գորութիւն տուին Պարթոլոյի և Պաւլոյի (1496) գրեանցը : Բայց մեկնութեան այս կերպը ուրիշ բան չէր ցուցներ՝ եթէ ոչ այն անկումը՝ որուն մէջ այդ ժամանակներուն ինկած գլորած էր օրէնքներուն գլտութիւնը :

Ընդհակառակը ուրիշ վեհապետներ ալ ամեն ջանք ի գործ դրած են արգիլելու վարդապետութեամբ օրէնքին բացատրութիւնը : Յուստինիանոս, Digesti յառաջականին մէջ, իր օրէնքներուն վրայ մեկնութիւն ընելը յատկապէս արգիլած է : Բրուսիոյ Ֆրէտէրիկ Ա. Կայսրն ալ միևնոյն ցնորքը ունեցած է եզեր, և կըսեն թէ Մեծն Նափոլէօն չէ կրցեր զսպել իւր դժկամակութիւնը երբ իրեն ներկայացուցեր են իւր Օրինագրքին վրայօք եղած



առաջին մեկնարանութիւնը՝ «Օրինագիրքս կորսուեցաւ» գոչելով:

Ըլլայ թէ ոգոսի, ըլլայ Ֆէրտինանա Կաթողիկի, Յուստինիանոսի և Ֆրէտէրիկ Առաջնոյ, որպէս և Մեծն Նախորէօնի, կը պատասխանեն՝ որ ասոնց ամենն ալ չորաչար կերպով սխալ ըմբռնած են զբազան օրինաց թէ յատկութիւնը եւ թէ նպատակը: Նախ՝ մարդկային օրէնքը ուրիշ բան չի կրնար ընել եթէ ոչ զնել ընդհանուր սկզբունքներ: Յնորական յոյս մը յղանալ ըսել է, կ'ըսեն, կարծելն որ այդ օրէնքը կարող է կանոնաւորել կանխաւ ամեն բան, այնպէս որ զայն բանալը միայն բաւ է գտնելու հոն՝ ծագելիք դժուարութեանց լուծումը: Յետոյ՝ որքան ալ փոփոխելի որ պարտի ըլլալ զբազան օրէնքը, չի կրնար, կ'ըսեն, յամառաբար անշարժ մնալ հանդէպ ընկերութեան որ կը քայլէ: Գործնականը խռթքն է կ'ըսեն, որոյ կը բախին օրինադրքերուն անկատարութիւնները: Գործնազէտները կը ցուցնեն զեղծումներն ու պակասները. տեսագէտները մասնանիչ կ'ընեն փախաբերի բարենորոգումները: Վարդապետութիւնը և Իրաւագիտութիւնը իրենց իրր գործի կը ծառային: Մէկէն միւսը զազափարնելու շարունակական փոխանակութիւն մը տեղի կ'ունենայ, նախ բացատրելու համար օրէնքը, յետոյ կանխելու համար զայն, և այնպէս է որ կը կատարուի տակաւ տակաւ մտքերու այն աշխատութիւնը որ յառաջգիմութեան ճամբաներ կը պատրաստէ: «Ժամանակը, կ'ըսէ Պէլիմ, որ կը յարգէ բնական օրէնքները, կը հինցնէ տակաւ տակաւ զբազան օրէնքները: Չեն կրնար պարծիլ որ բաւական կատարեալ ըլլան տեւելու համար յար ընդ միշտ, և ոչ ալ բաւական յստակ գտնեց տանելու համար ամեն մեկնութիւն»:

Օրէնքները մեկնելու կերպը. — Պէտք է յիշել որ օրէնագրին կամքն է որ կը կազմէ օրէնքը: Արդ, այս կամքը միշտ որոշուած է յաւիտենական արդարութեանը մէկ սկզբունքովը կամ մասնաւոր օգտակարութեան շարժառիթովը: Ատկէ, կ'ըսեն, պէտք է հետեցնել որ միթիւն կամ երկգիմի օրէնքը պէտք է որ միշտ մեկնուի բնական արդարութեան, անոր մասը կազմող օրէնա-

գրութեան մասնաւոր օգուցն, և վերջապէս վրան գործադրուելիք նիւթին սկզբունքներուն ամենէն աւելի համաձայն իմաստով:

Երբ երկու օրէնք իրարու հակառակ կ'երևին, պէտք է, կ'ըսեն, նախ ապահով ըլլալ՝ թէ մի գուցէ օրէնագիրը նպատակ ունեցած ըլլայ տարբեր պարագաներ. կը բաւէ այն տեսնել զայնս հաշտեցնելու համար՝ գործադրել իւրաքանչիւրը իրեն վերաբերող բուն նիւթին:

Գալով այն առաւել կամ նուազ մեծ ընդարձակման՝ զոր պարտ է տալ օրէնագրին բառերուն ըստ իւր մշտքին, կարելի է միշտ ամբողջացնել օրէնքին մէջ զայն որ էական է նորա դիտաւորութեանը, որով պարզ խելքը միայն կը բաւէ տեսնելու համար որ ընդհանրապէս բաղձացուած բանի մը հասնիլ ուզող անոր ստացման միջոցներուն ալ զուտ կը ծագէ:

Յետոյ երբ օրէնք մը կ'արգելու այն՝ որ ըստ ինքեան ապօրինաւոր չ'է, կամ թէ կը թոյլատրէ՝ ինչ որ բարոյականը կը դատապարտէ, միով բանիւ՝ օրէնք մը որ, մասնաւոր պատճառներով կը հեռանայ ընդհանուր սկզբունքներէ, պարտի, կ'ըսեն, կատարելապէս պարփակուիլ իւր գործադրութեանը մասին՝ օրէնագրին կողմանէ զըծուած սահմաններուն մէջ:

Գրական օրէնքին վրայօք եղած ընդհանուր նկատուողութիւնները աւարտելու համար՝ կը մնայ խօսիլ օրէնքներուն յետադրականութեանը (rétroactivité) և զեջմանը (Coutume) վրայ և անոր վրայ ևս՝ զոր կը կոչեն ընկալական արդարութիւն կամ արդարասիրտութիւն (Équité):



Հ ա տ ու լ ա ճ Ե

Օրենքներուն ոչ-յետասագրականոչքիւնը .

Օրենքը յետասագրեցիկ արդիւնը չ'ունի (effet rétroactif) . — Այն սկզբունքէն ըստ որում օրէնք մը ստիպողական կ'ըլլայ իւր հրատարակուած վայրկեանէն սկսեալ՝ կը թղխի սա հետեւութիւնը, որ դրական օրէնքը պարտի գործել մի միայն սպագային և ոչ անցելոյն համար . ուրիշ բառերով ըսելու համար, չի պարտիր արտագրել յետասագրեցիկ արդիւնը մը : Քաղաքացոց քաղաքային ազատութեան գործը լմեցած կ'ըլլար եթէ կարելի ըլլար զայնս նեղել այնպիսի արարքներու համար՝ որք կատարուած են այս արարքներուն կատարումը ներելի եղած տատենը, կամ թէ հանգիստ չի թողուլ զանոնք օրինաւորապէս ստացուած իրաւունքներու վայելմանը մէջ :

Բացառութիւն այդ սկզբունքիւն . — Որքան ալ նուիրական ըլլայ այդ սկզբունքը, պէտք չէ սակայն զայն բացարձակապէս հռչակել, վասն զի կան պարագաներ որոց մէջ օրինաց յետասագրականոչքիւնը (rétroactivité) իւր զծէն դուրս կ'ենէ : Այս կէտին վրայ երկար բարակ չի խօսելու համար, որ մեր ձեռնհասութենէն թէ վեր է և թէ գուրս՝ հետեւեալ օրինակով բացատրենք վերոյիշեալ սկզբունքին բացառութիւնը :

Ենթադրենք որ Ք. օրինակի համար, 21 ու կէս տարեկան ըլլալով այս ինչ Օրինագիրքը զայն չափահաս ճանչցած ըլլայ 6 ամիսէ ի վեր . եթէ օրինական արամագրութիւն մը զայ երկարել Ք. ին չափահասութիւնը մինչև 23 տարեկան, այս Ք. ն դեռ անչափահաս պիտի մնայ մէկ ու կէս տարուան համար . բայց սա ստոյգ է որ անիկայ չափահաս պիտի եղած ըլլայ 6 ամսեայ ժամանակամիջոցին մէջ . և հետեւաբար, բոլոր այն արարքները որք չափահասութիւն կը պահանջեն և զորս Ք. կատարած է այդ վեցամսեայ միջոցին մէջ, չափահաս անձի մը կողմանէ կատարուած ըլլալով, են և պիտի մնան վաւերական և ընդունելի :

Հ ա տ ու լ ա ճ Զ

Չեզուակ օրինաց (abrogation des lois) . — Անոր ծածոչքիւն (Désuétude) .

Գրական օրէնքները կը դադրին ստիպողական ըլլալէ՝ կամ յետնագոյն օրէնքով մը՝ որ զայնս կը ջնջէ, կամ անգործածոչքեալք :

Չեզուակ օրինաց . — Բնաւ դժուարութիւն յարուցուած չէ յետնագոյն օրէնքով ջնջման վրայ : Յայտնի է որ օրէնագիրքը, ընկերային շահուն վրայ հիմնուած ամենակարողութիւն մը գործածելով, պարտի կարենալ ետ առնուլ հին օրէնքները որպէս և հրատարակել նորեր :

Յետնագոյն օրէնքով մը դրական օրինաց ջնջումը կամ յայտնի (expres) է և կամ թէ լռելեայն (tacite) : Յայտնի է՝ երբ յետնագոյն օրէնքը բացարձակապէս կը յայտարարէ ջնջել կանխագոյն օրէնքը : Լռելեայն է՝ երբ յառաջ կուգայ մի միայն կանխագոյն և յետնագոյն օրէնքներուն միջև եղած հակառակութենէն : Այս պարագային յայտնի է որ վերջին օրէնքն է որ պարտի յաղթել իրր օրէնագրին կամքին արտայայտութիւնը :

Անգործածոչքիւն . — Անգործածոչքիւնը օրէնքներուն ջնջմանը երկրորդ կերպն է : Չեզուակ այս աղբիւրը միևնոյն հիմն ունի քան յայտնի կամ լռելեայն ջնջումը :

Անգործածոչքեալք ջնջման հակառակողները մտքերնին դրած են որ ջնջման այս կերպը քաջալեր մըն է օրէնքը անարգելու . և կըսեն, որ ատիկայ կրնայ հասկըցուիլ նախնական ընկերութեան մը մէջ՝ ուր օրէնքագիր իշխանութիւնները աղէկ մը որոշուած չեն . բայց չի կրնար հաշտուիլ կազմակերպուած ընկերութեան մը հետ՝ ուր օրէնագիրքը զրեթէ մնայուն հանգամանք ունի . և կը յարեն վերջապէս՝ թէ ատիկայ չըջապատուած է ամէն շահերը տակն ու վրայ ընող անորոշութեամբ մը :

Մի քանի օրէնագրութիւններ : Համաձայնելով այս գա-



դափարներուն, հրամայած են ապաքէն հրովարտակել որ օրէնք մը բնաւ երբէք չի կրնար իյնալ անգործածութեան (Désuétude) մէջ: Անգործածութեամբ ոչ-Ղընձման սկզբունքը ընդունողներուն մէջ կը յիշուին Աւրստրիական օրէնքը (Աւստրիական Օրինագիրք, յօդ. 9) և Անգլիական օրէնսդրութիւնը:

Բայց այս անարկութեանց կը պատասխանեն որ կառավարութիւնը, օրէնսդիրը կրնան մոռնալ՝ ակամայ կամ դիտմամբ՝ հաշակելու ջնջումը ամեն օրէնքներուն որք անօգուտ եղած են և թերեւս ալ վտանգաւոր: Անոնք կրնան թողուլ զայնս շուքի մէջ, ճիշդ անոր համար որ չեն գործադրուիր, և յետոյ, դար մը վերջը, կուգան զայնս արթնցնել իրենց մահաբուն թմրութեանէն ջնջման թերութեան պատրուակովը: Ատի ճիշտ այն է որ պատահած է նոյն ինքն այն Անգլիոյ մէջ զոր իբր օրինակ առաջ բերինք: 1817ին, Թօրնթըն անունով մէկը, Մարիա Էշթըն անունով մանկամարդուհւոյ մը սպաննութեամբը ամբաստանուած, շատ մը ծանրացուցիչ պարագաներով, երդուեալներու կողմանէ անպարտ արձակուած էր: Իւր արձակումէն վերջը, ըստ պանուած անձին եղբայրը, հայրենիք վերադառնալով դատին վերաքննութիւնը խնդրած էր: Թօրնթըն առաջարկեց ինք զինքը արդարացնել մենամարտութեամբ, և դատաւորները ինքզինքնին ստիպուած կարծեցին ընդունելու ասոր խնդիրքը, հին օրէնքին համաձայն որ ջնջուած չէր: Շատ բարեբաղդաբար, զոհին եղբայրը, խորհելով որ իւր հակառակորդը շատ կորովի ու շատ վարժ էր գէնք գործածելու մէջ, ետ քաշուեցաւ: Յաջորդ տարին Խորհրդարանը օրէնք մը հրատարակեց դատական նոյն օրինակ գայթակղութեան մը կրկնումին առջևը առնոյ համար:

Այս օրինակը լաւագոյն փաստն է ի շնորհս անգործածութեամբ ջնջման:

## Հ Ա Մ Ո Ւ Լ Ա Տ Է

Օրէնքներուն գործողութեան շրջանակը.

Իրեկց առարկային տեսակետէն օրէնքներուն բաժանումը: — Շատ ընդհանուր տեսակէտով մը նկատելով՝ իրենց նիւթին յարաբերութեամբ՝ կրնանք ըսել որ դրական օրէնքներուն ամենքն ալ անձնական են: Ապաքէն, ամենքն ալ կ'ուղղուին անձերու, քանի որ անկարելի է թէ տեսականապէս և թէ գործնականապէս հրամայել, արգիլել կամ թողաբերել՝ ինչ որ ըլլայ՝ իրերու: Բայց եթէ ամեն քաղաքային դրական օրէնքները անհրաժեշտաբար անձնական են, երբ նկատենք այն էակները որոց ատոնք կ'ուղղուին, և որոց համար տրուած են, սխտի հասկնանք որ երբ զայնս կը նկատենք յարաբերութեամբ նիւթին զոր կ'ուղեն կ'անունաւորել, կրնան բաժնուիլ, և թէ կը բաժնուին շատ բնականաբար երկու դասակարգի, ըստ որում կը զբաղին մի միայն անձերով կամ իրերով՝ որոց հետ անձերը յարաբերութեան մէջ են: Այս տեսակէտով, ուրեմն իրերու օրէնքներ կան հանգէպ անձերու օրէնքներուն, դրական օրէնքներ ընդգէմ անձնական օրէնքներուն:

Անձնական օրէնքները կը բաժնուին նաև երկու կարգի, որովհետեւ կը վերաբերին անձերու իբր բնակիչ երկրին, կամ կը վերաբերին անձերու հետեւելու համար անոնց ուր որ երթան: Ատկէ կը ծագի զանազանութիւնը բարեկարգութեան օրէնքի (lois de police) և բուն անձնական կոչուած օրէնքի:

Այսպէս ուրեմն ուսումնասիրելով օրէնքներուն գործողութեան շրջանակը, կը տեսնենք որ օրէնքները կը բաժնուին՝ իրական օրէնքներուն, բարեկարգութեան օրէնքներուն և անձնական օրէնքներուն:

Իրական օրէնքներ. — Իրական օրէնքները անոնք են որոց գլխաւոր կէտ նպատակին են ինչքերը, ասոնց պահպանումը անհատին ձեռքերուն կամ ընտանեացը



մէջ, ասոնց փոխանցութեան կերպերը: Ասոնք մեզի կը ցուցնեն թէ որ ինչքերը պարտին նկատուելի որպէս շարժուն, որպէս անշարժ. որպիսի՞ իրաւունքներ և պարտականութիւններ կրնան գոյութիւն ունենալ ի նպատակ հողի մը հանդէպ միւսոյն իրենց դրացիութեանը ազգաւ, և այլն, և այլն:

Բարեկարգութեան օրէնքներ. — Բարեկարգութեան օրէնքները անոնք են՝ որոց նիւթն է կարգ ու կանոնի պահպանութիւնը և հասարակաց անդորրութիւնը: Այլ ստիպեն ամեն անոնք, առանց բացառութեան, որք կը բնակին երկրին մէջ, նոյն իսկ օտարահասակները: Արգարութիւնը կը պահանջէ որ, ասոնք ալ պաշտպանուած ըլլալով այս օրէնքներէն, իրենք ալ յարգեն դայնս իրենց կարգին և չի վայելեն մենաշնորհը գալու անպատիժ կերպով ցանելու խռովութիւն այն երկրին մէջ՝ որ զիրենք կը հիւրընկալէ: Այլ որ ստքը կը գնէ երկրի մը վրայ, կը ստանձնէ ուրեմն հոն աղէկ վարուել, յարգել անդանօր հաստատուած կարգ ու կանոնը, կամ թէ կրել իրեն գործելիք յանցանքներուն դէմ դրուած պատիժները:

Սակայն առ հասարակ ընդունուած է որ կառավարութեան մը փոխանորդական հանգամանօք օժտուած պատգամաւորները, օրինակի համար դեսպանները, դատելի չեն դատարաններուն առջին այն երկրին ուր կը գտնուին պատգամաւորական կամ դեսպանական պաշտօնով: Իրենց դէմ ըլլալիք բողոքները պէտք է որ ներկայացուին բողոքարկուին կառավարութեանը, եւ այս կառավարութիւնը կրնայ ձեռք առնուլ յարմար միջոցները նկատմամբ այն ազգին՝ որոյ կը վերաբերին պատգամաւորները: Այս բայցառիկ նիւթը, սակայն, կարգադրուած է միջազգային իրաւագիտութենէն որպէս և միջազգային դաշնագրութիւններէն:

Բռն և անձնական կոչուած օրէնքները. — Բռն և անձնական կոչուած օրէնքները անոնք են՝ որք կը վերաբերին մասնաւորապէս անձերու, և որով օրէնագրին գլխաւոր նպատակն է կարգաւորելու իրենց վիճակը և ճշտելու անոր հետեանքը եղող առաւել կամ նուազ մեծ կարողութիւնը: Այսպէս այն արամագրութիւնները որք կ'որոշեն թէ որ տարիքին մէջ, և որ անձերու հաւա-

նութեամբը կարելի է ամուսնանալ, որ զաւակունք օրինաւոր են, ինչ՞ է ծնողաց իշխանութիւնը զաւակաց վրայ, որ տարիքին մէջ շափահաս է մարդս, որոնք են անշափահասութեան արդիւնքները, և այլն, և այլն, անձնական օրէնքներ են:

Օրէնքի և հեղինակութիւնը. — Կրական օրէնքները ինչ որ ալ ըլլան, իրական, բարեկարգութեան կամ անձնական, ամենքն ալ հաւասարապէս հնազանդութիւն կը պատուիրեն: Սակայն, ինչ որ ալ ըլլան օրինաց հեղինակութիւնը և անոնց պարտական հնազանդութիւնը, պէտք չէ ստիպէ հետեցնել որ երբեք կարելի չէ հեռանալ անոնց տրամագրութիւններէն: Այս մասին պէտք է լաւ մը զանազանել այն պարտքերը զոր մեր վրայ կը գնեն և այն իրաւունքները զոր մեզ կը շնորհեն: Եթէ ոչ ոք կրնայ խոյս տալ պարտքէն ինքնայտօր, ընդհակառակն իւրաքանչիւր ոք կրնայ բնականաբար հրաժարիլ իւր իրաւունքէն, բաւ է որ այս իրաւունքը հաստատուած ըլլայ մի միայն ի շնորհս իւր, և նոյնպէս բաւ է որ օրէնսդիրը, հասարակաց կարգապահութեան պատճառներով, անոր լքումը արգիլած կամ սեղմած չ'ըլլայ: Ահա ատով է որ ամուսին մը չի կրնար հրաժարիլ ամուսնական իշխանութենէն, որ հայր մը չի կրնար հաւանիլ հրաժարելու իւր հայրական իշխանութենէն, որ մարդ մը չի կրնար ինքզինքը ծախել ուրիշ մարդու մը՝ և ինքզինքը անոր գերին ընել: Բայց այն օրէնքներէն զատ որք կը շահագրգռեն, մտտէն կամ հեռուէն, հասարակաց կարգապահութիւնը կամ լաւ բարքերը, մարթ է խոտորիլ օրէնսդրին միւս ամեն տրամագրութիւններէն որք իրաւունքներ կը շնորհեն: Առ հասարակ հաստատուած է որ մասնաւորաց իրարու միջև եղած պայմանագրութիւնները կրնան միշտ խոտորիլ սովորական օրէնքներէն երբ այս օրէնքներուն միակ նպատակը անձերուն լոկ մասնաւոր շահն է:



## Հասուած Ը

## Ա ն գ ի թ Ի թ ա շ ռ շ լ ք .

Սովորաբանը (Coutume). — Իրաւունքին սղբիւրնե-  
րուն հետազոտութեամբը գրազող իրաւագէտները, սովոր  
են գանազանութիւն մը դնել Գրաւոր իրաւունքին և Անգիր  
իրաւունքին միջև: — Գրաւոր իրաւունքը այն է որ ծա-  
նօթ հեղինակ մը ունի, այն որ հրատարակուած է: —  
Անգիր իրաւունքը կը կորսուի՝ իւր ծագմամբը՝ ժամա-  
նակաց գիշերին մէջ: Ատի գարէգար փոխանցուած  
սովորութիւններու ժողովում մըն է. ատի վերջապէս,  
է այն՝ զոր Սովորաբան կը կոչեն: Երբ Տէրութեան մը  
անգամները երկար ատեն հրապարակաւ ենթարկուած  
են զործերու ինչ ինչ կանոններու, և թէ ընկերային  
իշխանութեան աւանդապաշտը, իրազեկ այս յաջորդա-  
կան եղելութեան, գայնս ոչ ուղղակի և ոչ ալ անուղ-  
ղակի խոտած չէ, ատկէ կը ծագի իրաւասական սո-  
վորութիւն մը՝ հիմնուած, մէկ կողմանէ, Տէրութեան  
անգամներուն կամքին վրայ, և, միւս կողմանէ, օրէնս-  
գրին լուրջայն հաճութեանը վրայ: Այս սովորութիւնը  
կը ստանայ այն միւսնայն ստիպողական զօրութիւնը զոր  
ունի բուն օրէնք կոչուածը, և կը գառնայ այգպէսով  
գրական իրաւունքին մէկ աղբիւրը:

Պատմութիւնը մեզի վը սովրեցնէ որ, ընկերութեանց  
մանկութեանը պահուն, Սովորաբանը օրէնսգրութեան  
ամենէն լիաւատ աղբիւրը եղած է: Օրէնք շինելու  
յատկացուած զործին այն ատենները շատ անկատար  
էր: Այսու հանդերձ քանի մը կանոններ կը բաւէին  
այն ժողովուրդներուն որոց կազմաւորութիւնը պարզ  
էր և առանց կենսատութեան, հաստատելու համար ըն-  
տանիքին իրաւունքները և ընչից փոխանցութիւնը:  
Ներկայ սերունդը կը հետևէր նախընթաց սերունդին  
ընդունած սովորութեանը, և այս վերջինը գայն իր  
կարգին աւանդաբար ընդունած էր իւր նախորդէն:

Բայց ազգերը նոր քաղաքակրթութիւնը կազմող մեծա-  
մեծ զարգացումները ստանալէն ի վեր, և Տէրու-  
թիւնները օրէնսգրական մեքենան ճշգրութեամբ կազ-  
մաւորող Սահմանադրութիւնները ունենալէն ի վեր,  
Սովորաբան իշխանութիւնը շատ և շատ սեղմուած  
է: Եւ սակայն տակաւին Եւրոպիոյ մէջ երկիրներ կան  
որք կառավարեալ են մեծաւ մասամբ սովորաբաններով,  
օրինակի համար ամենէն աւելի Անգլիան և յետոյ  
Գերմանիան: Գաղղիոյ մէջ ալ ստիպողական զօրութիւն  
ունեցող սովորաբաններ կան զորս օրէնսգիրը յատկա-  
պէս վաւերացուցած է:

Արդարասիրտաբան կամ բնական արդարաբան (E-  
quite). — Գրաւոր օրէնքներէն և Սովորութիւննե-  
րէն զատ՝ իրաւագէտները Վարդարասիրտութիւնը կը  
նկատեն իրաւունքին իրր մէկ աղբիւրը: Ատի ամեն  
օրէնսգրութեան անհրաժեշտ յաւելուածն է կ'ըսեն:  
Բնական արդարութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ բա-  
ցարձակ արդարութեան այն զգացումը՝ որ կը ծլի պա-  
տուաւոր ամեն հոգիներուն խորը, և որ երբեմն կը հե-  
ռանայ գրական օրէնքին արամագրութիւններէն: Են-  
թաղբեցէք, օրինակի համար, որ մէկը հարուստ ըլլայ,  
թէ անոր պարտականը ըլլայ թշուառութեան մէջ, և  
բնաւորեալ ընտանիքով և թէ գայն սնուցանելու  
համար ուրիշ բան չ'ունենայ՝ եթէ ոչ իւր ձեռացը աշ-  
խատութիւնը. ենթադրեցէք որ, այդ վիճակին մէջ,  
հարուստը իւր առնելիքին պէտք չ'ունենալու վիճակի  
մէջ գանուելով հանդերձ, ծախել տայ այն քիչ մը  
բանը զոր ունի իւր այդ պարտականը. անշուշտ, գայն  
ընելով նա բռնաբարած չը պիտի ըլլայ գրական իրա-  
ւունքը, մարդկան իրաւունքը, բայց ընդոտնած պիտի  
ըլլայ արդարասիրտական զգացումը:

Արդարասիրտութեան դէմ շատ մը առարկութիւններ  
եղած են իւր քնածիլին առաջնորդող բան մը: Ինչ որ  
ալ ըլլայ, սա յայտնի է որ գառաւորը պէտք չէ ատոր  
դիմէ երբ օրէնքը բացայայտ է և բացարձակ: Բայց  
երբ օրէնքը մթին է կամ երկասյրի, երբ երկու իմաս-  
տով մեկնուելու կարելիութիւնը կը ներկայացնէ, այն  
ատեն ատենակալին համար պարտք մ'է նախընտրելու



այդ երկու իմաստներէն զայն որ աւելի աղէկ կը հա-  
մաձայնի արդարասիրտքեան հետ: Նոյնպէս, երբ օրէնքը  
զանց ըրած է այս ինչ կամ այն ինչ խնդրի վրայ բացա-  
արութիւն տալը, դատաւորը պարտի հետեւիլ՝ իւր որո-  
շումը կազմելու համար՝ բնական արդարտքեան կանոն-  
ներուն:

Գրական Իրաւագիտութեան զանազան միշտերդ. —  
Իւր ընդգրկած նիւթերուն, իւր հոգալիք շահերուն  
տեսակէտէն նկատելով՝ Գրական Իրաւագիտութիւնը  
կը վերցնէ մեծ բաժանում մը եւ բազում ստորա-  
բաժանումներ: Ապաքէն զայս հետեւեալ կերպով կը  
բաժնեն՝



# Ա. ՄԱՍՆԱԻՈՐ ԻՐԱԻԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(DROIT PRIVÉ)

ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆԸ ՕՐԷՆՔՆԵՐՈՒ ՈՐՔ ԿԸ ԿԱՆՈՆԱԻՈՐԵՆ ՄԱՍՆԱԻՈՐԷ ՄԱՍՆԱԻՈՐ ԵՂԱԾ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քաղաքային իրաւագիտութիւն (Droit Civil):

Ամբողջութիւնը արամադրութիւններու որք կը կանոնաւորեն ընտանիքի վիճակը զօդելով անոր իմինիս եւ քուկինիդ գանազանութիւնը:

Վաճառականական իրաւագիտութիւն (Droit Commercial):

Մասնաւոր իրաւագիտութեան այն ճիւղը որ կ'որոշէ աւելի մասնաւորապէս վաճառականաց յարաբերութիւնները ըլլայ իրենց միջեւ, ըլլայ ոչ - վաճառականներու հանդէպ:

Պատասխանական իրաւագիտութիւն (Droit de Procédure):

Ամբողջութիւնը կանոններու որք կը գծեն մասնաւորներուն հետեւելիք ճամբան եւ գործածելիք միջոցները, իրենց իրաւունքը պաշտպանելու համար յատենի արդարութեան:

# Բ. ՀԱՆՐԱԿԱՆ ԻՐԱԻԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(DROIT PUBLIC)

ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆԸ ՕՐԷՆՔՆԵՐՈՒ ՈՐՔ Կ'ՈՐՈՇԵՆ ԵՒ ԿԸ ԿԱՌԱՎԱՐԵՆ ԱՆՀԱՏՆԵՐՈՒ ԵՒ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ ԵՂԱԾ ՓՈՓՈԽԱԿԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԿԱՄ ԹԷ ՏԷՐՈՒԹԵԱՆՅ ԻՐԱՐՈՒ ՄԻՋԵՒ ՈՒՆԵՅԱԾ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ն Ե Ր Ք Ի Ն (Interne)

ԱՐՏԱՔԻՆ (Externe)

կամ

Քաղաքական իրաւագիտութիւն (Droit politique ou Constitutionnel):

Ամբողջութիւնը կանոններու որք կ'որոշեն կառավարութեան մը կառավարեալներու հետ ունեցած յարաբերութիւնները. իշխանութեանց բաժանումը. Սահմանադրութեան ասոնց մէջ հաստատուած յարաբերութիւնները. քաղաքացուց երաշխաւորեալ առաջնակարգ իրաւունքները. այն պայմանները որոցմով ազգին անդամները կը վայելեն եւ կը գործածեն այս իրաւունքները:

Վարչական իրաւագիտութիւն (Droit Administratif):

Ամբողջութիւնը կանոններու որոցմով կառավարեալ են մասնաւորաց իրաւունքները ասոնց վարչական գործին հետ հանդիպմանը մէջ: Ան կը կառավարէ վարչութեանը եւ քաղաքացիներու անձնիւր իրաւունքները եւ փոփոխակի պարտականութիւնները:

Պատժական իրաւագիտութիւն (Droit pénal ou Criminel):

Ամբողջութիւնը կանոններու որք կ'որոշեն թէ որ պարագային մէջ, ինչ միջոցներով եւ որպիսի պատիժներով օրէնսգիրը ուզած է որ իւր օրէնքներուն բռնարարութիւնը պատժուի:

Միջազգային իրաւագիտութիւն (Droit des gens ou international):

Ամբողջութիւնը կանոններու որք կ'որոշեն ազգերու փոխադարձ իրաւունքները ու պարտքերը, ըլլայ խաղաղութեան վիճակին, ըլլայ պատերազմի վիճակին մէջ:

Վ Ե Ր Ջ

Դրական իրաւագիտութեան եւ Երրորդ Մասին:



